



ԹԵՂՈՒՏ

Փակ բաժնետիրական ընկերություն

Երևան 2021


Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախատեսվող գործունեություն

*Մպարտողական հատկությունները
կորցրած ապրանքներից գոյացող
թափոնների պահման*

«Թեղուտ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

ՇՄՍ ռիսկերի գնահատում


Վլադիմիր Նալիվայկո
Արայիկ Ծատուրյան

	Հապավումների ցանկ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊՄ	Անհատական պաշտպանության միջոցներ
ԲԸՏՄ	Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին
ԱԹ	Արտադրական թափոններ
ԱԹՏՏ	Արտադրական թափոններ տեղադրման տեղամաս
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԹԿՊ	Թափոնների կառավարման պլան
ՇՄՄՏԿ	Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպությունը

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկություններ	5
1.1 Ներածություն	5
1.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական դաշտը.....	6
1.3 Նպատակները և մեթոդաբանությունը	16
2. Շրջակա միջավայրի և Սոցիալական վիճակի նկարագրություն	17
2.1 Տեղադիրքը	17
2.2 Սեյսմիկություն և տեկտոնիկա	19
2.3 Կլիմա	21
2.4 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	26
2.5 Ջրային ռեսուրսներ.....	30
2.6 Հողային ռեսուրսներ	38
2.7 Բուսական և Կենդանական աշխարհ	40
2.8 Լոռու մարզի զարգացման ռազմավարությունը	41
2.9 Պատմամշակույթային հուշարձանների վրա ազդեցության գնահատում.....	43
3. Գործունեության ընդհանուր նկարագիրը և թափոնագոյացնող գործընթացները	45
3.1 Սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոնների շարժը .	45
3.2 A պահեստ	51
3.3 B պահեստ.....	58
4. Շրջակա Միջավայրի վրա ազդեցության հիմնական ռիսկեր	62
5. Այլընտրանքային տարբերակների վերլուծություն	63
6. Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման միջոցառումներ	64
<i>Բողոքների կառավարում</i>	<i>66</i>
<i>Արտակարգ իրավիճակների արձագանքման և Հակահրդեհային միջոցառումներ</i>	<i>66</i>
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր.....	70
7. Գրականություն	72
Հավելված 1	73
Հավելված 2	74
Հավելված 3	75

1. Ընդհանուր տեղեկություն

1.1 Ներածություն

«Թեղուտ» ՓԲԸ-ն իրականացնում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանում և վերամշակում: Թեղուտի պղնձա-մոլիբդենային հանքավայրը ուսումնասիրվել է 1974-1976 թվականներին իրականացված հետախուզական աշխատանքների արդյունքում: Հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում, Շնող համայնքի տարածքում, Ալավերդի քաղաքից 29 կմ հեռավորության վրա դեպի հարավ-արևմուտք:

«Թեղուտ» ՓԲԸ պաշարների մեծությամբ Հայաստանի Հանրապետությունում երկրորդն է և հանդիսանում է երկրի համար խոշոր հարկ վճարող ընկերություն, որը գործում է ՀՀ օրենքով սահմանված բոլոր չափանիշներին համապատասխան՝ տարեկան 7մլն տոննա արտադրողականությամբ:

2019 թվականին լեռնահարստացուցիչ կոմբինատի վերագործարկումից հետո ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրներին: Այդ նպատակով, ընկերությունը իրականացնում է բազմաթիվ միջոցառումներ: Մասնավորապես ընկերության գործունեության արդյունքում առաջանում են սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոններ¹, որոնց արդյունավետ կառավարման համար ընկերությունը մշակել է թափոնների կառավարման պլան: Կառավարման պլանով հստակեցվել են թափոնների շրջանառության հավանական սցենարները և բացահայտվել են խնդիրները: Հիմնական խնդիրներից են՝

- i. պինդ թափոնների վերամշակմամբ և վնասազերծմամբ զբաղվող մասնագիտացված ընկերությունների անհասանելիությունը տարածաշրջանում

¹ չի վերաբերում մթնոլորտ արտանետումներին, ջրային արտահոսքերին, ընդերքօգտագործման թափոններին:

ii. արդյունաբերական թափոնների տեղադրման մասնագիտացված պոլիգոնների բացակայությունը

Հայաստանի Հանրապետությունում, արդյունաբերական թափոնների տեղադրման մասնագիտացված պոլիգոնների բացակայության և թափոնների վերամշակմամբ և վնասագերծմամբ զբաղվող լիցենզավորված մասնագիտացված կազմակերպությունների սակավության պայմաններում, ընկերությունը պլանավորել է, իր տարածքում կազմակերպել արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամաս:

Նշված գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ Ա կատեգորիայի, վտանգավոր թափոնների հավաքում, պահում, օգտագործում, մշակում, վերամշակում, հեռացում կետի, որն էլ համարվում է լիցենզավորվող գործունեություն:

Այս հաշվետվությամբ Թեղուտ ՓԲԸ-ն ներկայացնում է արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամասի (ԱԹՏՏ) կառուցման և շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:

1.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական դաշտը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝ Հիմնադրությամբ փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ: Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման

նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրույթային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լսումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների

բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և "Կենդանական աշխարհի մասին" (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" N 71-Ն և "ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին" N 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, որոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1994թ., լրամշակվել է 2007թ.) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային

տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանարարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1973-Ն և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը և դրանց հետ գործածությանը վերաբերվող ընդհանուր դրույթները:

Օրենսգրքի Գլուխ 13-ը սահմանում է հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, այդ թվում. հողամասն օգտագործման տրամադրելը (անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով), հողամասի կառուցապատման իրավունքը, հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները և հողամասի սերվիտուտը: Օրենսգրքի Գլուխ 15-ը նկարագրում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ընթացակարգը:

" ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ " 2017թ թիվ 1404 որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

"Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների

գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրառումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

ՀՀ Կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշումը ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին

ՀՀ Կառավարության 29 հունվարի 2010 թվականի N 71-Ն որոշումը ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին

ՀՀ Կառավարության 29 հունվարի 2010 թվականի N 72-Ն որոշումը ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին

ՀՀ Կառավարության 31 հուլիսի 2014 թվականի n 781-ն որոշումը ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին

"Հայաստանի Հանրապետության 29 հունվարի 2004 թվականի Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 49-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Լոռու մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը՝ Նկար 1:

Տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների վրա ազդեցության վնասի գնահատումը իրականացվում է՝ ՀՀ կառավարության "Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին" թիվ 764-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության "Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" թիվ 91-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության "Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" թիվ 92-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության "Ջրային ռեսուրսների

վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին" №1110-Ն որոշմամբ:

Նկար 1; ՀՀ Լոռու մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը՝

5.37. Թեղուտ գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ	13 դ.	գյուղից 4 կմ հեռու	Հ	
	1.1			Խաչքար «Կարմիր Վարդան», «Վարդան Ջորավար»	13-14-րդ դդ.		Հ	
2				ԱՄՐՈՑ «ԲԵՐԴՇԵՆ»	Ք. ա. 4-3 հազ.	գյուղից հս	Հ	բլրի վրա, ավերված
	2.1			Մատուռ	4-5-րդ դդ.	ամրոցի կենտր. մասում	Հ	
3				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՂԱՓՈՒՐ»	միջնադար	գյուղից 4 կմ ան	Հ	
	3.1			Եկեղեցի «Ղարաքոթուկ»	12-17-րդ դդ.		Հ	
4				ԴԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ	Ք. ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ ան, «Փիջվուտ» վայրում	Հ	
5				ԵԿԵՂԵՑԻ	12 դ.	գյուղից 1 կմ հվ-ամ	Հ	ավերված
	5.1			Գերեզմանոց	12-17-րդ դդ.		Տ	
		5.1.1		Խաչքար	12 դ.		Հ	
		5.1.2		Խաչքար	13 դ.		Հ	
6				ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	գյուղից 3 կմ հվ-ան	Հ	
7				ԿԱՍՈՒՐՋ	17 դ.	գյուղի ամ մասում, Մանատն գետակի վրա	Հ	միաթոփչք
8				ՉԻԹՀԱՆ	19 դ.		Տ	
9				ՄԱՏՈՒՌ	12-13-րդ դդ.	գյուղից 2 կմ հս, «Ագեղցի» վայրում	Հ	
	9.1			Խաչքար	12-13-րդ դդ.		Հ	
	9.2			Խաչքար	13 դ.		Հ	
10				ՄԱՏՈՒՌ	4-5-րդ դդ.	գյուղից 1 կմ հվ-ան	Հ	
11				ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՆՍԵՎ	13 դ.	գյուղից 3 կմ հս-ան, Մանատն գետակի աջ ափին	Հ	անտառում
	11.1			Եկեղեցի	13 դ.		Հ	միանավ սրահ
	11.2			Թևավոր խաչ	13 դ.		Հ	3 կտոր՝ սրբերի պատկերաքանդակներով, տեղափոխվել են Շնողի դպրոցի թանգարան
	11.3			Միաբանության շենքը	13 դ.		Հ	պահպանվել են հետքեր
	11.4			Շրջապարիսպ	13 դ.		Հ	պահպանվել են հետքեր
12				ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆ	միջնադար		Հ	

Սույն գնահատման հաշվետվությամբ Թեղուտ ՓԲԸ-ն ներկայացնում է արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամասերի (ԱԹՏՏ) կառուցման և շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:

ՄՆԻԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՆԱՄԱՏԱՅԻ ԿՈՆՎԵՆՏԻԱ

Կոնվենցիայի Կողմերը, Ընդունելով, որ սնդիկը այնպիսի քիմիական նյութ է, որը համաշխարհային առումով մտահոգություն է առաջացնում՝ պայմանավորված մթնոլորտում դրա հեռահար տարածություններում տեղաշարժմամբ, անթրոպոգեն գործունեության արդյունքում շրջակա միջավայր թափանցելու պահից դրա կենսունակությամբ, էկոհամակարգերում դրա կենսակուտակման ունակությամբ, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած դրա լուրջ բացասական ազդեցությամբ,

Վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության բնապահպանական ծրագրի Կառավարման խորհրդի՝ 2009 թվականի փետրվարի 20-ի հմ. 25/5 որոշումը՝ նախաձեռնել միջազգային միջոցներ՝ ուղղված արդյունավետորեն, գործուն և հետևողականորեն սնդիկի կարգավորմանը,

Վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության՝ «Ապագա, որը մենք ուզում ենք» թեմայով Կայուն զարգացման համաժողովի եզրափակիչ փաստաթղթի 221-րդ կետը, որը պարունակում է սնդիկի հարցով իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող համաշխարհային փաստաթղթի շուրջ բանակցությունները հաջող ավարտելու կոչ՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգի վերացման նպատակով,

Վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության՝ Կայուն զարգացման համաժողովի կողմից Շրջակա միջավայրի և զարգացման Ռիոյի հռչակագրի սկզբունքների վերահաստատումը, ներառյալ, այդ թվում, ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվության սկզբունքը, և ընդունելով պետությունների համապատասխան պայմաններն ու հնարավորությունները, ինչպես նաև համաշխարհային մակարդակում գործողությունների անհրաժեշտությունը,

Գիտակցելով, առողջության համար վտանգները, հատկապես՝ զարգացող երկրներում, որոնք հետևանք են խոցելի բնակչության, հատկապես՝ կանանց, երեխաների և, նրանց միջոցով, ապագա սերունդների վրա սնդիկի ազդեցության,

Նշելով, որ Արկտիկայի էկոհամակարգերը և բնիկների համայնքները հատկապես խոցելի են՝ սնդիկի բիոմագնիսացման և ավանդական սննդամթերքի վարակման հետևանքով, և մտահոգված լինելով ընդհանուր առմամբ բնիկ համայնքների վրա սնդիկի ազդեցությամբ,

Նկատի ունենալով Մինամատայի հիվանդության նշանակալի դասերը, մասնավորապես՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա սնդիկի աղտոտվածության ունեցած բացասական ազդեցությունը, և սնդիկի պատշաճ կառավարումն ապահովելու և ապագայում նման դեպքերի կրկնումը կանխարգելելու անհրաժեշտությունը,

Ընդգծելով ֆինանսական, տեխնիկական, տեխնոլոգիական աջակցության և կարողությունների ձևավորման ոլորտում աջակցության կարևոր նշանակությունը, հատկապես՝ զարգացող երկրներում և անցումային տնտեսություն ունեցող երկրներում՝ նպատակ ունենալով ընդլայնելու սնդիկի կառավարման բնագավառում նրանց ազգային կարողությունները և խթանելու Կոնվենցիայի արդյունավետ իրականացումը,

Ընդունելով նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ սնդիկի հետ կապված գործունեությունը՝ ուղղված մարդու առողջության պաշտպանությանը, և համապատասխան բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի, հատկապես՝ Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին Բազելի կոնվենցիայի և Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին Ռոտերդամի կոնվենցիայի դերը,

Ընդունելով, որ սույն Կոնվենցիան և բնապահպանության և առևտրի ոլորտում միջազգային այլ համաձայնագրերը փոխլրացնող բնույթ ունեն,

Ընդգծելով, որ սույն Կոնվենցիան չի հետապնդում որևէ Կողմի՝ ցանկացած այլ գործող միջազգային համաձայնագրից բխող իրավունքների և պարտականությունների վրա ազդելու նպատակ,

Գիտակցելով, որ վերոնշյալ արձանագրող դրույթը նպատակ չունի սահմանելու գերակայություն սույն Կոնվենցիայի և այլ միջազգային փաստաթղթերի միջև,

Նշելով, որ սույն Կոնվենցիայի որևէ դրույթ Կողմերից յուրաքանչյուրին չի խոչընդոտում կիրառելի միջազգային իրավունքի համաձայն ստանձնած՝ Կողմերի այլ պարտավորություններին համապատասխան՝ սնդիկի վնասակար ազդեցությունից մարդու առողջությունը և շրջակա միջավայրը պաշտպանելուն ուղղված ջանքերի շրջանակում ձեռնարկելու լրացուցիչ ներպետական միջոցառումներ, որոնք համահունչ են սույն Կոնվենցիային, համաձայնեցրել են կոնվենցիայի հոդվածները որոնք վավերացրած կառավարությունները պարտավոր են ապահովել:

1.3 Նպատակները և մեթոդաբանությունը

Նախատեսվող արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամասի (ԱԹՏՏ) կառուցման համար լրացուցիչ նոր տարածքներ չեն խախտվելու: Տեղամասը ներգրավված է լինելու ընկերության լցակայանների տեղադրման ընդհանուր տարածքի մեջ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման այս հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները և ազդեցության գնահատման շրջանակը: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, թափոնների կառավարման միջազգային լավագույն փորձի և ճյուղային նորմատիվների համաձայն:

Հիմնական տեղեկատվությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի, դրանց աղտոտվածության ֆոնային մակարդակի մասին ձեռք է բերվել գրասենյակային ուսումնասիրությունների և նախկին ուսումնասիրությունների արդյունքում:

Ընկերության արդյունաբերական թափոնների տեղադրման տեղամասի իմպլեմենտացման գործընթացը առանցքային դերակատարում կունենա թափոնների կայուն կառավարման հասնելու գործում, ինչը համահունչ է շրջակա միջավայրի պաշտպանության օրենսդրական և նորմատիվային պահանջներին:

Հիմնական նպատակներն են:

- **բացահայտել** նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը
- **գնահատել** նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը
- **վերլուծել** շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող բոլոր հավանական ռիսկերը
- **ներկայացնել** շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերի կանխարգելմանը, չեզոքացմանը, նվազեցմանը և/կամ մեղմացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

ԱԹՏՏ-ի ստեղծման արդյունքում Թեղուտ ՓԲԸ-ն հնարավորություն է ունենալու լիարժեք ներդնել Թափոնների կառավարման պլանը, որի արդյունքում ձևավորվելու է աստիճանական կառավարում և ընկերությունը ունենալու է՝

- Թափոնների ծավալների կրճատում և ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարելավում
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցում
- Ֆինանսական եկամտաբերություն և արդյունավետություն
- Ծախսերի կրճատում
- Աշխատակիցների համար անվտանգ աշխատանքային միջավայրի ստեղծում և հասարակության առողջության վրա ազդեցության մինիմալիզացում
- Բարելավվելու է իրազեկությունը

2. Շրջակա միջավայրի և Սոցիալական վիճակի նկարագրություն

2.1 Տեղադիրքը

Թեղուտ ՓԲԸ-ի մոտակա բնակելի տարածքներն են Թեղուտ և Շնող գյուղերը, որոնք գտնվում են հանքավայրից 4կմ և 6կմ հեռավորությունների վրա: Ընկերությունը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական

տարածքում: Հանքավայրի հեռավորությունը ուղիղ գծով ԵՐԵՎԱՆ–ԹԲԻԼԻՍԻ երկաթգծից և ավտոմայրուղուց կազմում է 7կմ: Մոտակա երկաթուղային կայարաններն են Ախթալան և Այրումը: Հեռավորությունը մինչև Ախթալա կայարան կազմում է 15կմ, (Նկար 2):

Հանքավայրից դեպի ԵՐԵՎԱՆ–ԹԲԻԼԻՍԻ ավտոմայրուղի տանող ճանապարհները ասֆալտապատված են:

Շնող գետը և իր ձախ վտակները հանդիսանում են շրջանի հիմնական ջրային արտերիաները: Թեղուտի հանքավայրը 1.0x 2.5 կմ չափսերով հյուսիս-արևելքում սահմանակից է Շնող գետին, արևելքում – Կռունկ վտակով, հարավում - Դուքանաձոր գետի ձախ ափով և արևմուտքում Պակասաջուր գետի աջ ափով:


Մոտակա խոշոր ջրահոսքը Դեբեդ գետն է, որի մեջ է թափվում նաև Շնող գետը Թեղուտի հանքավայրից 7 կմ հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևմուտք :

Թեղուտ ՓԲԸ-ն գտնվում է Վիրահայոց լեռների շղթայում, նիշերի բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 700-1450մ: Ամենաբարձր գագաթը Լավվար սարն է ծովի մակարդակից 2543.5մ:

Տարածքի ռելիեֆը բարդ է, կտրատված չորս կիրճով, որոնցով հոսող գետակները ունեն մշտական ջրհոսք: Այդ գետակներն են՝ Շնողը, Կռունկը, Պակասաջուրը, Դուքանաձորը:

Թեղուտ ՓԲԸ-ի գտնվելու վայրում բացակայում են այլ արդյունաբերական ձեռնարկություններ, գործող շինարարական հզորություններ, շինարդյունաբերական բազաներ:

Նկար2: իրավաճիկային քարտեզ՝ (ըստ Google Maps-ի), հեռավորությունները զգայուն կլանիչներից



Նախատեսվող գործունեության 2 պահստային տարածքներն էլ գտնվում են Թեղուտի լեռնահատկացման տարածքում և նոր տարածք չի խախտվելու:


2.2 Սեյսմիկություն և տեկտոնիկա


Թեղուտի հանքավայրի շրջանը բնութագրվում է տարակողմորոշված ճեղքման խախտումների լայն զարգացմամբ: Տարբերում են լայնական և մերձլայնական, հյուսիս-արևելյան, հյուսիս-արևմտյան, միջօրեական և մերձամիջօրեական խախտումներ: Ըստ տարածման նրանք պահպանված են և դիտվում են մինչև 3 կմ հեռավորության վրա, ուղեկցվելով ջարդված, վերասեղմված և թերթավորված ապարների գոտիներով:

Հանքավայրի տարածքում զարգացած են միկրոճաքավորության բազմաթիվ համակարգեր, որոնք կապված են ապարների բազմապատիկ բրեկչիարությանը նպաստող ճաքերի տարակողմորոշված համակարգերի գոյացման հետ:

Հանաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող Սեյսմակայուն Շինարարության նախագծման նորմերի ՀՀՇՆ 20.04, տարածքի սեյսմիկ վտանգի հաշվարկի համար հիմք ընդունել գործող նաձագծման նորմաները: Շինարարության նախագծման նորմերի ՀՀՇՆ II-2.02-94 [4] դիտարկվող տարածքը գտնվում է I գոտում (մինչև 8 բալ), որին համապատասխանող գրունտի հորիզոնական արագացման առավելագույն մեծությունը 200 սմ/վրկ² կամ 0.2 g :

Համաձայն ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ մարտի 31-ի թիվ 372 հրամանի Թեղուտ և Շնող համայնքերը գտնվում են առաջին սեյսմիկ գոտում: Այս հրամանով հաստատվել է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի քարտեզը և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզը:





Նկար 3; Սեյսմիկ քարտեզներ

2.3 Կլիմա

Շրջանը, որտեղ կառուցվել է կոմբինատը, բնութագրվում է ցամաքային կլիմայով, օդի ջերմաստիճանի տատանման օրական և տարեկան զգալի ամպլիտուդներով: Կլիմայի վերընթաց գոտիականության շնորհիվ առանձնանում են հետևյալ գոտիները՝

700-ից մինչև 800-1000մ ծ.մ.-ը բարձրությունների վրա չափավոր շոգ, պակասախոնավ գոտի է, ամառը շոգ է, չափավոր խոնավ, ձմեռը կարճատև է, բարեխառն, սակավաձյուն:

800-1000-ից մինչև 1400մ ծ.մ.-ը բարձրությունների վրա՝ չափավոր տաք, խոնավ գոտի է, ամառը տաք է, համեմատաբար խոնավ, ձմեռը չափավոր ցուրտ է:

1400-ից մինչև 2000մ ծ.մ.-ը բարձրությունների վրա՝ չափավոր խոնավ գոտի է, ամառը չափավոր տաք է, խոնավ, ձմեռը երկարատև, հաստատուն և խոր ձյունածածկույթով:

Տեղանքի բարձրությունների հետ օրինաչափորեն ավելանում է տեղումների քանակը, քամու արագությունը, իսկ մթնոլորտային ճնշումը և օդի ջերմաստիճանը իջնում են:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանների տատանման ամենացածր ջերմաստիճանները դիտվում են հունվար-փետրվար ամիսներին, ամենաբարձր՝ օգոստոսին: Գարնան ամիսներին օդի ջերմաստիճանները ավելի բարձր են քան աշնանը: Այդպիսի ջերմաստիճանային ռեժիմը պայմանավորված է գարնան ամիսներին տեղումների մաքսիմալ քանակությամբ, ամպամածությամբ, ինչպես նաև ջրբաժանային մասերում ձյունածածկույթի պահման երկարատևությամբ: Շրջանի ջերմաստիճանային ռեժիմի վրա զգալի ազդեցություն ունի նաև անտառածածկույթը: Տաք և խոնավ կլիման հանդիսանում է բուսականության առատության պատճառը:

Տեղումների տեղաբաշխումը տարվա ընթացքում անհավասարաչափ է, երկու արտահայտված մաքսիմումով՝ մայիս-հունիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Մայիս և հունիս ամիսների տեղումները կրում են տեղատարափ բնույթ:

Թեղուտի հանքավայրի շրջանում կլիման չափավոր մեղմ է և խոնավ: Ռելիեֆի ցածրամասերում ամառը շոգ է, տեղումների քանակը չափավոր: Բարձրամասերում ամառը հարաբերական զով է, տեղումների քանակը բավականի մեծ, հաճախ տեղատարափների տեսքով: Ձմեռը փափուկ է, սակավաձյուն: Նախալեռներում ձյունածածկույթը պահպանվում է մինչև ապրիլ, իսկ ջրաբաժաններում մինչև մայիս ամիսը: Գերակշռում են հարավային, ավելի հազվադեպ հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղությամբ քամիները:

Տեղանքի կլիմայական բնութագրերը բերված են աղյուսակներում ըստ Շնող օդերևութաբանական կայանի (656մ ծ.մ.) տվյալների՝ 30 տարվա դիտումների հիման վրա:

Օդի ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

ջերմաստիճանի բնութագիրը	ամսական ջերմաստիճանը												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
միջին	-0.1	1.3	5.0	10.3	15.1	18.7	22.3	22.3	17.7	12.4	6.3	2.0	11.1
բացարձակ նվազագույն	-22	-15	-14	-5	0	5	7	7	0	-6	-10	-20	-22
բացարձակ առավելագույն	19	21	27	31	33	36	38	38	35	31	26	22	38

Հաշվարկային ջերմաստիճանային բնութագրերը՝

միջին առավելագույն ջերմաստիճանը ամենաշոգ ամսվա հուլիս համար՝ +28.5°C

միջին նվազագույն ջերմաստիճանը ամենացուրտ ամսվա հունվար համար՝ -3.3°C

Տեղումների միջին և առավելագույն քանակը, մմ (1961-1990 թթ.)

տեղումների բնութագիրը	տեղումների միջին ամսական քանակը												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
միջին քանակը	19	21	39	51	77	86	49	37	37	41	32	16	505
դիտված առավելագույն քանակը	63	69	71	114	137	162	139	161	93	128	65	39	836

Օդի հարաբերական խոնավությունը

հարաբերական խոնավության բնութագիրը	ամիսներ												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
միջին, %	68	68	70	68	73	70	64	62	70	74	76	70	69
13 ժամվա ընթացքում ≥80% հարաբերական խոնավությամբ օրերի թիվը	6.1	5.0	5.9	4.9	4.5	3.3	1.3	1.4	3.3	5.6	8.0	6.4	55.7

Գոլորշունակության ջրի մակերևույթից գոլորշիացման ամսական մեծությունները, մմ

ամիսներ						գումարը
VI	VII	VIII	IX	X	XI	

93	118	115	95	57	37	515
----	-----	-----	----	----	----	------------

Բուսագուրկհողիցգոլորշիացմանհաշվարկայինամսականմեծությունները, մմ

ամիսներ						գումարը
VI	VII	VIII	IX	X	XI	
59	75	60	54	39	30	317

Մթնոլորտային երևույթներով օրերի թիվը

Մթնոլորտային երևույթ	Մթնոլորտային երևույթներով օրերի թիվը ըստ ամիսների												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Մառախուղ	4	2	3	1	0.2	0.5	0.09	0.2	0.5	0.9	2	4	18
Բուք	0.7	0.2	0.1	-	-	-	-	-	-	-	-	-	0.4
Ամպրոպ	0.03	0.07	0.3	4	13	14	8	7	6	3	0.2	-	56
Կարկուտ	-	-	-	0.2	0.2	0.5	0.6	0.1	0.06	0.03	-	-	1.2

Քամիների ուղղությունների կրկնելիությունը և անդորրը, %

Քամու ուղղություն	ուղղության կրկնելիությունը ըստ ամիսների												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Հս	19	18	25	24	18	15	14	13	18	17	24	19	19
Հս Արլ	13	17	21	21	20	19	19	19	19	20	19	13	18
Արլ	2	2	2	3	3	3	3	5	2	2	1	2	2
Հվ Արլ	7	6	6	6	6	7	6	5	6	7	6	8	6
Հվ	48	45	34	33	39	40	44	46	47	48	42	48	44
Հվ Արմ	4	4	4	5	5	8	6	7	4	4	3	4	5
Արմ	3	3	2	2	3	3	3	2	1	0	2	2	2
Հս Արմ	4	5	6	6	6	5	5	5	3	2	3	4	4
Անդորր	20	18	22	24	32	31	30	29	29	25	24	22	24

Քանու արագության բնութագիրը

Քանու բնութագիրը	միջին ամսական արագությունը												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Քանու միջին առագությունը, մ/վրկ	1.7	1.8	1.7	1.6	1.3	1.3	1.3	1.4	1.3	1.4	1.4	1.4	1.5
Ուժեղ քամով ≥ 15 մ/վրկ առավելագույն օրերի թիվը	3	4	3	3	3	2	1	2	2	1	2	4	11

Քանու առավելագույն արագությունը 5% ապահովածությամբ 27 մ/վրկէ:

Ձյան ծածկույթի միջին տասնօրյակային բարձրությունը, սմ


ամիս	X			XI			XII			I			II			III			IV			
	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	
ծնածածկի բարձրությունը			•	•	•	•	•	1	2	3	3	3	3	3	1	2	1	1	1	•	•	

• այն տասնօրյակների համար, երբ ձյան ծածկը բացակայել է ավելի քան 50 % ձմեռների դեպքում, միջին բարձրությունը չի հաշվում

Ձյան ծածկույթի բնութագիրը [6]

Տասնօրյակային ամենաբարձր ձյան ծածկույթը, սմ	35
Ձյան մեջ ջրի առավելագույն պաշարը, մմ	91

2.4 ՄԹՆՈՒՐՏԱՅԻՆ ՕԴ



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

2019 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օդոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2019 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 34648 նմուշառում, իրականացվել 189008 դիտարկում: Համաձայն իրականացված արդյունքների 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ փոքր-ինչ բարձրացել են Երևան քաղաքի փոշու, Գյումրի քաղաքի

ծծմբի երկօքսիդի, Վանաձոր և Ալավերդի քաղաքների ազոտի երկօքսիդների, Արարատ քաղաքի փոշու, Կապան և Չարենցավան քաղաքների ծծմբի երկօքսիդների պարունակությունները, փոխարենն իջել են Վանաձոր և Ալավերդի քաղաքների փոշու ու ծծմբի երկօքսիդի պարունակությունները:

Փոշով աղտոտվածության գերազանցումները հիմնականում դիտվել են՝ Հրազդան, Ալավերդի և Վանաձոր քաղաքներում: Տարվա ընթացքում Հրազդանում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ն 1.4-2.2 անգամ, Վանաձոր և Ալավերդի քաղաքներում՝ շուրջ 1.1-1.3 անգամ, Արարատ քաղաքում՝ 1.1-2.2 անգամ:

Ծծմբի երկօքսիդով գերազանցումներ երբեմն դիտվել են Ալավերդի և Վանաձոր քաղաքներում: Տարվա ընթացքում Ալավերդի քաղաքում ծծմբի երկօքսիդի ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն հունվար ամսին՝ 1.1 անգամ, Վանաձոր քաղաքում՝ ապրիլ, մայիս, հունիս ամիսներին՝ 1.1 անգամ:

Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզներն՝ ըստ պասիվ նմուշառիչների տվյալների, հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

2019 թվականին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ քաղաքների փոշում որոշված մետաղներից նիկելի, մոլիբդենի և կոբալտի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, մնացած մետաղների համար ՍԹԿ-ները բացակայում են:

Ալավերդի քաղաքի օդային ավազանի որակի դիտարկումները 2019թ

Քաղաքները	2019թ. գործող դիտակայաններ			Փորձանմուշների քանակը
	Ակտիվ	Պասիվ (դիտակետ)	Ավտոմատ	
				պասիվ 2390
Ալավերդի	3	42	1	ակտիվ 2650
				պասիվ 4341
				ավտոմատ 90224
				պասիվ 1400

Ալավերդի


Քաղաքի երեք դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են մթնոլորտային օդի դիտարկումներ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի, երկու դիտակայանում՝ փոշու պարունակությունները որոշելու համար: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2650 փորձանմուշ: 2019 թվականին Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն աննշան, միջին տարեկան կոնցենտրացիան կազմել է 0.152 մգ/մ^3 (ՍԹԿ միջ.օր.= 0.15 մգ/մ^3), իսկ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

2019թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 3.21 է (փոշի՝ 1.01, ծծմբի երկօքսիդ՝ 2.04, ազոտի երկօքսիդ՝ 0.15):


Անշարժ դիտակայանում ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները որոշելու համար: Ավտոմատ սարքերի միջոցով ընդհանուր առմամբ կատարվել է օդի 90224 դիտարկում:

Ալավերդի քաղաքում և նրա շրջակայքում տեղադրված 42 դիտակետերում պասիվ նմուշառիչներով ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 4341 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2019 / ԱՆԱՎԵՐԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2019 / ԱՆԱՎԵՐԴԻ ԵՎ ՀԱՐԱՎԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ



Նախատեսվող գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է բավականին հեռու շրջանի արդյունաբերական ձեռնարկություններից և հիմնական մայրուղիներից: Մոտակա բնակելի տարածքը Թեղուտ գյուղն է, որը գտնվում է 3.0կմ հեռավորության վրա:

2.5 Ջրային ռեսուրսներ

Շրջանի հիդրոգրաֆիական ցանցը ներկայացված է Շնող գետով իր ձախ վտակների հետ: Շնողը Դեբեդ գետի խոշոր վտակներից մեկն է, նա վերցնում է իր սկիզբը Փամբակի լեռնաշղթայի լանջերից ծ.մ. 1600մ բարձրության վրա, Սարկուտ լեռնագագաթի (1999.8մ ծ.մ.) մոտակայքում: Շնողը թափվում է Դեբեդ աջ ափից 520մ բարձրության վրա:

Շնող գետի ձախափնյա վտակներն են Դուքանաձորը, Պակասաջուրը կամ Թեղուտ/Խառատաձոր, Կռունկը, Պիջուտը, Շնուտը, Գուլյաբին: Վտակները հոսում են հյուսիսարևելյան ուղղությամբ: Թեղուտի հանքավայրը 1 x 2,5կմ մակերեսով հյուսիս արևելքից սահմանափակվում է Շնող գետով, արևելքից – նրա Կռունկ վտակով, հարավից - Դուքանաձոր վտակի ձախափով, արևմուտքից - Պակասաջուր վտակի աջ ափով:

Շնող գետի ավազանի տեղանքը լեռնային է, կազմված կավային հողով ծածկված ապարներից: Համարյա ամբողջ ավազանը ծածկված է անտառներով:

Շնող գետը և նրա վտակները տիպիկ լեռնային գետեր են: Շնող գետի հովիտը իրենից ներկայացնում է նեղ V-ձև կիրճ: Գետերի սնուցումը համարյա ամբողջությամբ տեղի է ունենում անձրևային և հալոցքային ջրերի շնորհիվ, որի պատճառով մակերևութային ջրերը դերիտը արտահայտվում է սեզոնային փոփոխություններով:

Գետի ջրային ռեժիմը ուսումնասիրվել է ընդամենը երեք տարվա ընթացքում 1959 - 1962թթ.: Դիտումների և չափումների միջինացված արդյունքները հետևյալն են

Հունի գերակշիռ լայնություն՝ 4.6 մ

Գետի միջին խորություն՝ 0.15 մ

Հոսքի միջին արագություն՝ 0.40 մ/վրկ

95% ապահովվածության տարվա ամենափոքր միջին ամսական ծախսը՝ 0.060 մ³/վրկ

Գետի նվազագույն ծախսը՝ «չոր»

Գետի առավելագույն ծախսը՝ 34.1 մ³/վրկ

Ջրի միջին տարեկան ջերմաստիճանը՝ 6.2 °C

Շնող գետի վարարումը սկսվում է մարտ ամսին և վերջանում հունիսին, որից հետո հոսքը դառնում է կայուն, ջրասակավ նվազամակարդակ: Սեպտեմբեր-հոկտեմբեր լինում են կարճատև ինտենսիվ վարարումներ կախված տեղումներից:

Ընդհանրապես գետը բնութագրվում է հոսքի փոթորկոտությամբ, մանավանդ վարարումների ժամանակ և ուժեղ էրոզիայի ունակությունով:

Շնող գետի ողողահունում և Կռունկ, Դուքանաձոր, Պիջուտ վտակների հովիտներում դիտվում են հեղեղային երևույթներ՝ սելավներ: Քանի որ դիտարկվող տարածքը հիմնականում վրածածկված է ավազակավով և մեծ մասամբ անտառածածկով, սելավների հետևանքները հզոր չեն:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ» կամ «միջակ» որակի է (2-րդ կամ 3-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:


Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա գետը գետաբերանի հատվածում, Դեբեդ գետը՝ Այրումից վերև և սահմանի մոտ, Շնող, Աճանան (Նորաշենիկ), Կարճևան գետերը՝ գետաբերանի հատվածում, Ողջի գետը՝ Կապան քաղաքի օդանավակայանից ներքև հատվածում, որտեղ ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

3.3 մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:


2019 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5%-ը գնահատվել է 2-րդ դասի («լավ» որակի), 40.8%-ը գնահատվել է 3-րդ դասի («միջակ» որակի), 11.2%-ը գնահատվել է 4-րդ դասի («անբավարար» որակի) և 21.4%-ը գնահատվել է 5-րդ դասի («վատ» որակի):

2019 թվականին ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը
(դիտակետերի ընդհանուր թիվ՝ 97)




- 2-րդ դաս (լավ)
- 3-րդ դաս (միջակ)
- 4-րդ դաս (անբավարար)
- 5-րդ դաս (վատ)


2019 թվականին 33 ջրամբարների ջրի որակի նկարագիրը
(դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)



33 գետերի ջրի որակը 2019 թվականին



ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



ՀՀ մակերևույթային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
5	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև
6	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	0.5 կմ ք. Այրումից վերև
7	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	Սահմանի մոտ
343	Շնող	Հյուսիսային	Լոռի	Գետաբերան

ՀՀ գետերի ջրի որակը 2019 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև (1)	Երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
		0.6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, մոլիբդեն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, ԸԱԱ	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	
	Դեբեդ	0.5 կմ Մարց գետի թափման կետից	Երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
			0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Երկաթ Մոլիբդեն, ԿՆ	3-րդ 4-րդ
		սահմանի մոտ (7)	Երկաթ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն, ԿՆ	4-րդ	
	Չորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (10)	-	2-րդ	2-րդ
	Տաշիր	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև(11)	ԹՔՊ, երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Սարատովկայից ներքև (12)	Երկաթ	3-րդ	3-րդ

	Մարց գետ	Գետաբերան (13)	-	2-րդ	2-րդ
	Ախթալա	Գետաբերան (14)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, կոբալտ, երկաթ, կալցիում, բերիլիում, ՇԼԱ	3-րդ	5-րդ
			Ցինկ, պղինձ, կադմիում, մո- լիբդեն, մանգան, սուլֆատ իոն, ԿՆ	5-րդ	
Հյուսիսային	Գարգառ	Ակունք (210)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (342)	Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
	Շնող	Գետաբերան (343)	Նիտրատ իոն, երկաթ, ԿՆ	3-րդ	5-րդ
			Սուլֆատ իոն	4-րդ	
			Պղինձ, մոլիբդեն	5-րդ	
	Աղստև	1.2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	-	2-րդ	2-րդ
		2 կմ ք. Իջևանից վերև (17)	-	2-րդ	2-րդ
		2 կմ ք. Իջևանից ներքև (18)	Ֆոսֆատ իոն, ԿՆ	3-րդ	3-րդ
	Գետիկ	0.5 կմ գյ. Վահանից վերև (19)	Երկաթ, ԿՆ	3-րդ	3-րդ
		Գետաբերան (20)	-	2-րդ	2-րդ

2 -րդ դաս՝ «լավ» որակ, 3 -րդ դաս՝ «միջակ» որակ, 4 -րդ դաս՝ «անբավարար» որակ, 5 -րդ դաս՝ «վատ» որակ

*-Յրազդան գետի 52, 53, 54, 56, 225 դիտակետերում ջրի որակի «անբավարար» և «վատ» դասերը պայմանավորված են վանադիումով և կալիումով, որոնց պարունակությունը նշված գետում ֆոնային է:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև, Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, նիտրատ իոնով, ընդհանուր անօրգանական ազոտով և կախյալ նյութերով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» որակի (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախյալ նյութերով: Դեբեդ գետի Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և կախյալ նյութերով:

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև և Սարատովկա գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, երկաթով և կախյալ նյութերով:

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մոլիբդենով, մանգանով, սուլֆատ իոնով և կախյալ նյութերով:


րանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով և ընդհանուր ֆոսֆորով:

Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով և մոլիբդենով:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև հատվածներում, Իջևան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և կախյալ նյութերով:

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ»

(3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախյալ նյութերով, գետաբերանի հատվածում «լավ» (2 -րդ դաս):



2.6 Հողային ռեսուրսներ

Գուգարքի լեռնաշղթայի այս տարածաշրջանում հանդիպում են լեռնանտառային դարչնագույն հողեր՝ իրենց տարբեր ենթատիպերով: Լեռնանտառային դարչնագույն հողերը հիմնականում հանդիպում են ծովի մակերևույթից 500 –1700մ բարձրության սահմաններում (միայն հարավահայաց չորային շրջաններում այն կարող է հասնել 2400մ սահմանը):

Լեռնանտառային դարչնագույն հողերի տարածման շրջանների ռեփեֆին բնորոշ է բլուրների տեսքով բազմաթիվ բարձրունքներ, ինչպես նաև թմբեր և լանջեր, որոնք իջնում են կիրճերը ու գետերի հովիտները:

Այս հողերի հիմնական հողառաջացնող ապարներն են հանդիսանում պորֆիրիտների, դոլոմիտների, մերգելիտների, կրի, կոնգլոմերատների, ավազուտների, սուֆարեկչիաների հողմնահարման արդյունքները: Դրանք հիմնականում ներկայացված են դելյուվիալ և էլուվիալ-դելյուվիալ կարբոնատային և կրազերծված կավավազներով, իսկ հազվադեպ 1,5 – 2 մետր հզորության հասնող կավով:

Լեռնանտառային դարչնագույն հողերի տարածաշրջանները բնութագրվում են բարեխառն – տաք, փոփոխական – խոնավ կլիմայով, որը լեռնանտառային դարչնագույն կրազերծված հողերի տարածման շրջաններում փոխվում է բարեխառն – խոնավ կլիմայով՝ լավ արտահայտված ձմեռ - գարնանային տեղումներով: Տաք, մեղմ և փոփոխական – խոնավ կլիման, հողառաջացման ակտիվ շրջանի մեծ տևողությունը, բավարար ներքին դրենաժային համակարգի առկայությունը և ներհողային հոսքերի ուղղությունների սեզոնային փոփոխությունը նպաստում է առաջնային մինե-րալների խորը և ինտենսիվ հողմնահարմանը և երկրորդային հանքային նյութերի առաջացմանը, ինչպես նաև բավականին հզոր կավայնացված հողերի ձևավորմանը:

Լեռնանտառային դարչնագույն հողերի ձևավորման բիոկլիմայական առանձնահատկությունները նպաստում են անտառային բույսերի համակեցությունների լավ աճին և մեծ քանակությամբ բուսական կենսազանգվածի և թաղիքի առաջացմանը. յուրաքանչյուր տարի առաջանում է շուրջ 6-6,5տ/հա թաղիք: Փոռցաշերտի հանքայնացման արդյունքում տարեկան հող է մտնում մոտ 510-520կգ/հա հանքայնացված տարրեր:

Պահեստարանների կառուցման համար նախատեսվող հողի նպատակային նշանակությունը՝ արտադրական է, իսկ գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման, ինչը սեփականության իրավունքով պատկանում է

ընկերությանը: Անշարժ գույքի /Թեղուտ ՓԲ ընկերության լեռնահատկացման տարածք/ վկայականների ցանկը ներկայացված է հավելված 1-ում:

2.7 Բուսական և Կենդանական աշխարհ

Թեղուտի լեռնահանքային համալիրի ընկած է ՀՀ Իջևանի ֆլորիստիկ շրջանի հյուսիսում և դասվում է Կովկասի Ցիրկումբորեյան ֆլորիստիկ շրջանին: Ընդհանուր առմամբ Իջևանի ֆլորիստիկ շրջանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և բուսաբանական և բնապահպանական տեսանկյունից, որպես վայր, որտեղ աճում են մեծ քանակությամբ հազվագյուտ և էնդեմիկ բույսեր: Տարածքների բուսականությունը ներկայացված է գլխավորապես կաղնի-բոխի անտառներով, բնական բուսականության կազմում ներկայացված են դեղաբույսերի և ուտելի բույսերի որոշ տեսակներ²:


Դիտարկվող շրջանը գտնվում է Լոռու մարզի Թեղուտ գյուղի շրջակայքում և բաժանված է հինգ հատվածների՝ Խառատաձոր, Դուքանաձոր, Պիջուտ, Շնող գետե-րի ձորակները և հանքավայրի տարածքը: 2005թ հանքարդյունաբերության աշխատանքների նախագծման աշխատանքների շրջանում իրականացվել են Ֆաունիստիկական հետազոտություն Թեղուտ գյուղից հարավ և հարավ-արևմուտք ընկած ողջ տարածքում՝ ընդգրկելով վերը նշված բոլոր հինգ հատվածները: Հանքավայրի և հարակից տարածքների ֆաունիստիկական հետազոտությունը կատարվել է այդ տարածքում հանդիպող կենդանիների տեսակային կազմի բազմազանության, հազվագյուտ և էնդեմիկ տեսակների առկայության, ինչպես նաև հիշյալ տարածքում շրջակա միջավայրի վրա ինտենսիվ տնտեսական գործունեության հնարավոր ազդեցության գնահատման նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեության համար ընտրված տարածքները արդեն իսկ խախտված են և գտնվում են մարդու գործունեության անմիջական ազդեցության տակ՝ ընկերությանը տրամադրված լեռնահատկացման տարածքում, ուստի կոնկրետ նախատեսվող գործունեության տարածքի բուսական և

² Տես Թեղուտ ՓԲԸ-ի ՇՄԱԳ հաշվետվություն 2005թ, Լեռնամետալուրգիայի Ինստիտուտ ՓԲԸ:

կենդանական աշխարհի ներկայացուցիչների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրումը անհրատեսական է:

2.8 Լոռու մարզի զարգացման ռազմավարությունը



ՀՀ Լոռու Մարզի Տարածքը - 3799 քառ.կմ

Գյուղատնտեսական հողատարածքը - 250 903.4 հա

այդ թվում՝ վարելահողեր - 42038.3 հա

Մարզկենտրոնը - ք. Վանաձոր

Համայնքների թիվը - 56

որից՝ քաղաքային համայնքներ - 8

գյուղական համայնքներ - 48

Բնակավայրերի թիվը - 130

Բնակչությունը (մշտական), 2018թ. հունվարի 1-ի դրությամբ - 217.4հազ.մարդ

այդ թվում՝

քաղաքային - 128,8 հազ. Մարդ (59.2%)

գյուղական - 88,6 հազ. Մարդ (40.8%)

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արեւմուտքից Շիրակի, արեւելքից Տավուշի, հարավից Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին:

Մարզի տարածքով են անցնում Թբիլիսի-Երեւան երկաթուղու մի հատվածը: Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ քաղաքները: 2016-2017թթ.ին համայնքների խոշորացման արդյունքում Լոռու մարզը իր մեջ ընդգրկում է 56 համայնք:

Բնակավայրերի թիվն է 130, որից 8 քաղաքային բնակավայր, 122 գյուղական բնակավայր: Թումանյանի տարածաշրջանը, որում գտնվում է Թեղուտ ՓԲԸ-ն, կազմում է բնակչության 19,06% ընդգրկում է 4 քաղաքային և 34 գյուղական համայնքներ:

Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունում բավարար կերպով գնահատված է աղքատության մակարդակը մարզում, այն կազմում է.

Տարեթիվ/մակարդակ	Աղքատության	Ծայրահեղ աղքատության	Գործազրկություն
2020թ.	28.5%	1.9%	12.3

ՀՀ Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է արդյունաբերությունը, որի հիմնական ուղղությունները հանքագործական և մշակող արդյունաբերություններն են

2020 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից

նախատեսվել է. Հանքարդյունաբերություն 120,0 մլն դրամ Մշակող արդյունաբերություն
եւ այլ 1,0 մլրդ դրամ:

Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը
կազմում է 51,257 մլրդ. դրամ, որից

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2020թ. 51,257,686.1 որից՝

1. ՀՀ պետական բյուջե, 44,491,529.9 այդ թվում՝

սեփական միջոցներ 31,488,891.3

վարկային միջոցներ 13,002,638.6

2. Միջազգային կազմակերպություններ և դոնորներ 877,518.6

3. Համայնքային բյուջե 315,515.0

4. Մասնավոր ներդրողներ 4,773,122.6

5. Այլ աղբյուրներ 800,000.0

2.9 Պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցության գնահատում

Ընկերությունը 2009-2017թթ ընթացքում ԳԱԱ-ի Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի հետ համատեղ իրականացրել է մթակութային ժառանգության
ուսումնասիրություններ: Այդ ընթացքում հայտնաբերվել են մի շարք կոթողներ
որոնք ներկայացված են ցանկում;

2009 թ.

Դուքանաձոր-պղնձի ձուլարան, XII դ.

Ղարաքոթուկի հողեր-դամբարաններ, մ.թ.ա. XI դ.

Ղարաքոթուկի հողեր-հնձաններ, XIII դ.

Բովեր-դամբարաններ, մ.թ.ա. XII-XI դդ.

Բովեր-եկեղեցի, XVII դ.

2010 թ.

Ֆիրմի բաղեր-դամբարաններ, մ.թ.ա. I դ.
Ֆիրմի բաղեր- ձուլարան, XIII դ.
Փիջուտ-բնակավայր, մ.թ.ա. IX դ.
Ձորիզեղ-բնակավայր, մ.թ.ա. XXVIII դ.
Ղարաքոթուկի հողեր- եկեղեցի, XIV դ.
Դուքանաձոր- դամբարաններ, մ.թ.ա. XII-XI դդ.
Դուքանաձոր-պղնձի ձուլարան, XIVդ.
2011 թ.

Խառատանոց-արտադրական կառույց, մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.
Խառատանոց- դամբարաններ, մ.թ.ա. XI-X դդ.
Բրազձոր- դամբարաններ, մ.թ.ա. XII-XI դդ.
Զնգանեք-բնակավայր, XV դ.
Բաղերի ճալա- դամբարաններ, մ.թ.ա. XIII-XII դդ.
Խառատանոց-արտադրական կառույց, մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.
Բովեր-դամբարաններ, մ.թ.ա. XII-XI դդ.
2013 թ.

Ձորիզեղ-բնակավայր, մ.թ.ա. XXVIII դ.
Խառատանոց-արտադրական կառույց, մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.
Բաղերի ճալա-հնձաններ, XIII-XIV դդ.
Բարձրյալ-բնակավայր, մ.թ.ա. IX-VII դդ.
Բարձրյալ- դամբարաններ, մ.թ.ա. X- I X դդ.
2014 թ.

Բովեր-դամբարաններ, մ.թ.ա. XII-XI դդ.
Խառատանոց-արտադրական կառույց, մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.
Մաշնանց բաղեր-բնակավայր, մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.
Փիջուտ- դամբարաններ, մ.թ.ա. IX-VIII դդ.
2015 թ.

Փիջուտ- դամբարաններ, մ.թ.ա. IX-VIII դդ.
Փիջուտ- բնակավայր, մ.թ.ա. XXVII դդ.
Ֆիրմի բաղեր- բնակավայր, XIII դ.
Ձորիզեղ- դամբարաններ, V- VI դդ.

2016 թ.

Բրազձոր- բնակավայր, XVI դ.

Բովեր- բնակավայր, XI դ.

Չորիգեղ-բնակավայր, մ.թ.ա. XXVIII դ.

Զնգանեք- դամբարաններ, մ.թ.ա. IX-VIII դդ.

2017 թ.

Բարձրյալ- դամբարաններ, մ.թ.ա. X- IX դդ.

Բովեր- բնակավայր, XI դ.

Բովեր- դամբարաններ, մ.թ.ա. VII-VI դդ.

Թեղուտի հնագիտական արշավախումբը ղեկավարել է Սուրեն Հոբոյանը:

Թեղուտ ՓԲԸ-ն 2021թ-ից վերսկսել է ԳԱԱ-ի ի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ աշխատանքները, մշակույթային ժառանգության պահպանության և ուսումնասիրման նպատակով:

3. Գործունեության ընդհանուր նկարագիրը և թափոնագոյացնող գործընթացները

3.1 Սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոնների շարժը

Թեղուտի լեռնահանքային համալիրի հիմնական և օժանդակ օբյեկտները տարածականորեն խմբավորվում են 4 արտադրական հրապարակներում՝

- քացահանք՝ լցակույտային տնտեսությունով և ծանրաքարշ ավտոմեքենաների ավտոհավաքակայանով (լեռնահանքային վարչություն);
- հարստացուցիչ ֆաբրիկա՝ իր պոչային տնտեսությունով;
- օժանդակ վարչություն, որը ներառում է խճի ստացման տեղամասը, բետոնի պատրաստման հանգույցը, կոմբինատային տրանսպորտի հավաքակայանը, մեխանիկական, շինարարական և այլ օժանդակ արտադրամասեր;

- հյուրանոցային համալիր (հյուրանոց, ճաշարան, ռեստորան, լվացքատուն):
Թեղուտ ՓԲԸ-ում, ըստ սահմանված կարգի, առկա են 18 անձնագրավորված թափոններ, որոնք ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1; թափոնների ցանկ

N	Թափոնի անուն	կոդ	քանակ	Թափոնի քիմիական կազմը
1.	Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	3533010013 011	500 հատ/տարի	Սնդիկ- 0.02-0.03%, ապակի - 96-98% մետաղներ-1.7-2% լյումինոֆոր-2-3%
2.	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	92110100 13 01 2	75 հատ/տարի	Կապարե թիթեղներ 70-75%, պլաստմասե իրան- 10-13%, էլեկտրոլիտ (ծծմբական թթու)-15-20%
3.	Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	50 լ/տարի	Յուղ -94.5%, մեխանիկական խառնուրդներ -2.5%, ջուր 3%

4.	Բանեցված տրանսմիսսիոն յուղեր	54100206 02 03 3	23000 լ/տարի	Յուղ -97.2% , մեխանիկական խառնուրդներ -2.8%
5.	Հալոգեն չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	54100213 02 03 3	23000 լ/տարի	Յուղ -95.5% , մեխանիկական խառնուրդներ -2%, ջուր- 2.5%
6.	Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ	54100302 02 03 3	6000 լ/տարի	Յուղ -94.5% , մեխանիկական խառնուրդներ -2.0%, ջուր- 3.5%
7.	Բանեցված դիզելային յուղեր	54100203 02 03 3	30000 լ/տարի	Յուղ -95.0% ,մեխանիկական խառնուրդներ -1.8%, ջուր- 3.2%
8.	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	54100201 02 03 3	7500 լ/տարի	Յուղ -94.6% , ջուր- 3.2%, մեխանիկական խառնուրդների -2.1%
9.	Գործածված միանվագ ներարկիչներ	97010800 13 05 3	400 հատ/տարի	Պողպատ-10-14%, պոլիմերային միացություն- 81-85%, ռետին-9-5%
10.	Բանեցված օդաճնշիչ դողեր	57500200 13 00 4	665 հատ/տարի	Բութադիենային կաուչուկ - 97-99% , պողպատ-1-3%
11.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ	35131100 01 00 4	70 տ/տարի	Fe-88.81% Fe2O3-7.2%, ածխածին-3.85% այլ միացություններ այդ թվում, Pb-0.006%, Cd- 0.004%, Ni-0.1%,Bi-0.003%
12.	Կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ	91200400 01 00 4	120 տ/տարի	Ապակի -9-14%, սև մետաղ- 20-25%, փայտ -8-13% , թուղթ-25-30%, կտոր -3-7%, սննդի մնացորդ -11-15%, պոլիմերներ-7-12%

13.	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	250 կգ/տարի	Գործվածք-81-84%, յուղ -10-14%, ջուր-3-6%
14.	Եռակցման խարամ	31404800 01 99 4	100 կգ/տարի	Fe2O3-34.65%, MnO-13.83%, CaO-11.6%, SiO2-37.15%, TiO2-2.74%, այլ միացություններ- 0.02%,այդ թվում-Pb-0.005%, Cd-0.005%,Ni-0.02
15.	Բժշկական թափոններ	97010600 01 05 4	7 կգ/տարի	Բինտ-30.35%, բամբակ-35-40%, ապակյա սրվակ-8-12%, պլաստմասե սրվակ-2-5%, ռետինե ձեռնոցներ-3-5%, սավան-1-4%, խալաթ-3-6%, դիմակ-1-2
16.	Կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդների թափոններ	57109900 01 00 4	270 հատ/տարի	Պոլիմերային նյութ (պոլիէթիլեն, պոլիստիրոլ)- 99.5-99.8%, դիզելային և շարժիչային յուղերի մնացորդային քանակություն-0.2-0.5%
17.	Յուղերով աղտոտված մաքրման նյութեր	54902701 01 03 4	4,5 տ/տարի	Երկաթ-57%, ալյումին-9%, շարժիչային յուղ-10%, ստվարաթուղթ-20.5%, ռետին -1%, պոլիմերային նյութ- 2%,մեխանիկական ներխառնուկներ-0.5%
18.	Տարատեսակ փայտի փոշի և տաշեղ	17190103 01 00 4	250մ3/տարի	ցելյուլոզա(փայտանյութ)`85- 90% ջուր`10-15%

Ընկերությունում առաջացող արտադրական թափոնների տեսակները ըստ իրենց վտագավորության դասերի`

I դաս` չափազանց վտանգավոր թափոններ- 1 հատ

II դաս՝ վտանգավոր թափոններ- 1 հատ

III դաս՝ չափավոր վտանգավոր- 7հատ

IV դաս՝ քիչ վտանգավոր թափոններ- 9հատ

V դաս՝ դատարկ ապարները/լցակույտեր/

IV դաս՝ պոչամբար:

Թափոնների կայուն կառավարման սկզբունքների հիման վրա, արտադրական գործունեության արդյունքում առաջացած թափոնների շարժի կազմակերպման համար ուսումնասիրվել է տարածաշրջանում առկա աղբավայրերը, վերամշակող ընկերությունները:

Ընկերությունում առաջացող արտադրական թափոնների շարժի պլանավորումը, ըստ առաջարկվող մեթոդների(աղյուսակ 2), ունի այս բաշխվածության;

Վերամշակման ենթակա- 10թափոններ

Վնասագերծման ենթակա - 3 թափոններ

Տեղադրում համայնքային աղբավայրում- 3 թափոններ

Տեղադրում ընկերության տարածքում- 2 թափոններ

Աղյուսակ 2; Թափոնների ցանկը ըստ պլանավորվող գործողությունների

Թափոն	պլանավորվող գործողություններ			
	վերամշակում	վնասագերծում	տեղադրում	
			համայնքային աղբավայր	Ընկերության տարածք
Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան				
Բանեցված օդաճնշիչ դոդեր				
Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ				
Եռակցման խարամ				
Բանեցված կոմպրեսորային յուղեր				

Բանեցված տրանսմիսսիոն յուղեր				
Հալոգեն չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր				
Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ				
Բանեցված դիզելային յուղեր				
Բանեցված շարժիչների յուղերի թափոններ				
Տարատեսակ փայտի փոշի և տաշեղ				
Գործածված միանվագ ներարկիչներ				
Բժշկական թափոններ				
Կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ				
Յուղոտված լաթեր				
Յուղերով աղտոտված մաքրման նյութեր				
Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան				
Կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդների թափոններ				

Ընկերության գործունեության արդյունքում առաջացող արտադրական թափոններից՝ շահագործվող տարածքում, նախատեսվում է պահեստավորել առկա թափոններից միայն երկուսը.

- a. Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան,
- b. Կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդների թափոններ:

Համաձայն թափոնների տեղադրման ուղեցույցերի և լավագույն փորձի ուսումնասիրման արդյունքների, այս երկու թափոնները ենթակա չեն տեղադրման

համայնքային աղբավայրերում, ուստի այս թափոնների տեղադրումը պլանավորվում է իրականացնել «Թափոնների երկարատև պահում ("ԵՊ")» ռեժիմով՝ ընկերության տարածքում:

Ըստ այս ՇՄԱԳ գնահատման հաշվետվության, ընկերությունը վերը նշված թափոնների տեղադրումն իրականացնելու է համապատասխան կահավորվածություն ունեցող առանձին պահեստային տարածքներում՝ ապահովելով թափոնների երկարատև պահման և անվտանգության պայմանները:

Պահեստային տարածքների տեղաբաշխումը ընկերության տարածքում գլխավոր հատակագծի վրա ներկայացված է հավելված 3-ի:

Սույն նախագծով գնահատվում է սպառողական հատկությունները կորցրած ապրանքներից գոյացող թափոնների համար ժամանակավոր տեղադրման պահեստային կառույցների հավանական ազդեցության գնահատում: Այդ տարածքները լինելու են երկուսը և պայմանականորեն դրանք անվանում ենք A պահեստ և B պահեստ:

3.2 A պահեստ

A պահեստը, նախատեսվում է կահավորել գլխավոր արտադրամասի հարևանությամբ, (տես հավելված 1)

կոորդինատներով՝

N41° 06' 21" E44°50'14" կոորդինատային տարածքում

ARM WGS-84 համակարգով՝

X 84 86 300, Y 45 52 300 h 1009

90մ² ընդհանուր մակերեսով կառույց, որը ունի 6.0 մ լայնություն, 15.0 մ երկարություն և 3,0 մ բարձրություն: Այն մետաղական կոնստրուկցիաներով հավաքած, բետոնե հատակով, փակ ծածկով շինություն է: Տեղակայված է ընկերության արդյունաբերական հրապարակում, աղացման տեղամասի հարևանությամբ: Պահեստային տարածքը որպես ժամանակավոր պահեստ ներկայումս գոյություն ունի՝ որպես պահեստային կառույց

(տես նկար 4), անհրաժեշտ է միայն վերակահավորել նախագծի պայմանների ապահովման նպատակով:

Տեղամասի ներսում նախատեսված են 2 հարկից բաղկացած մետաղական դարակաշարեր՝ յուրաքանչյուր հարկում 18,0մ² օգտագործման ենթակա պահեստավորման մակերեսով (տես նկար 5): Պահման ենթակա է մինչև 25կգ քաշով խոտանված լամպեր: Պահեստային տարածքը չորս կողմից ունի բաց լուսամուտախորշեր օդափոխության համար և կողավող դուռ՝ կողմնակի մարդկանց մուտքը արգելելու նպատակով:

Նկար 4: Թեղուտ ՓԲԸ-ի տարածքում առկա A տիպի պահեստարանի արտաքին ընդհանուր տեսքը



Նկար 5: A տիպի պահեստարանի երկհարկանի մետաղական դարակաշարեր



Քանի որ պահեստարանի համար նախատեսված կառույցը պատրաստ է, իսկ արդյունաբերական հրապարակի այդ տեղամասը ամբողջությամբ բետոնապատ է, ուստի հողային կամ շին աշխատանքներ չեն իրականացվելու:

Բացառվում է նաև անձրևաջրերով թափոնների լվացումը, ուստ դրենաժային համակարգի անհրաժեշտություն չկա:


Շինությունը ունի բոլոր տեսակի ավտոտրանպորտային միջոցների ազատ հասանելիություն: Տարածքը ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերով:

Այստեղ նախատեսվում է տեղադրել միայն բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսենտային և սնդիկ պարունակող խողովակներ, որոնք մնացել են նախկինից և ծավալների ավելացում չի պլանավորվում: Ընկերությունը 2019թ.-ից սկսած ձեռք չի բերում նմանատիպ լամպեր, որոնք շարքից դուրս գալուց հետո, համաձայն <<Վտանգավորության դասակարգման թափոնների ցանկի>>, վերածվում են 1-ին դասի վտանգավորության թափոնների:

A պահեստային տարածքի գործունեության ժամկետը պայմանավորված է հանրապետությունում սնդիկային լամպերի վնասագերծման ծառայություններ մատուցող ընկերության ի հայտ գալով: Ուստի հստակ ժամկետներ սահմանելը անիրական է, իսկ լավատեսական սցենարով մոտակա 5 տարիների ընթացքում հնարավոր է նման ծառայությունների հասանելությունը:

Բանեցված սնդիկային լամպերի, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակների և խոտանի վտանգավոր հատկությունները

Հայտնի է, որ լյումինեսցենտային լամպերը ժամանակի ընթացքում աստիճանաբար գործածությունից դուրս են մղել շիկացման լամպերին, որոնք երկար տասնամյակներ լայն կիրառություն են ունեցել կենցաղում և տնտեսության տարբեր ոլորտներում: Ներկայումս առկա է սնդիկային լամպերի, լյումինեստային և սնդիկ պարունակող խողովակների կիրառությունից դուրս մղում լուսադիոդային LED լամպերի փոխարինմամբ: Լյումինեսցենտային լամպերի տարածվածությունը պայմանավորված էր դրանց էլեկտրախնայողությամբ, հզոր լույսի արձակման և երկար աշխատանքային ժամանակահատվածի ապահովման պատճառներով: Այնուամենայնիվ, այս սարքերն ունեն իրենց թերությունները:



Լյումինեսցենտային լամպերը պարունակում են սնդիկ, որը խիստ թունավոր քիմիական միացություն է: Լամպի աշխատանքի ժամանակ սնդիկը չի արտազատվում: Սնդիկը կարող է արտանետվել լամպը տեղադրելիս ուժ գործադրելու հետևանքով վնասվելու, անզգույշ տեղափոխման, հարվածի դեպքում: Լամպի կոտրվելուց հետո սնդիկը սկսում է գոլորշիանալ: Առաջացած սնդիկի գոլորշիները կարող են հանգեցնել մարդու օրգանիզմի թունավորման և մի շարք ներքին օրգանների գործառույթների խաթարման: Սնդիկի գոլորշիներն օրգանիզմ են թափանցում վերին շնչուղիների միջոցով: Սնդիկը հոտ չունի: Կոտրված լամպից արտազատված սնդիկի գոլորշիները շնչուղիների միջոցով թափանցելով մարդու օրգանիզմ՝ առաջացնում են թունավորում:

Սնդիկի գոլորշի պարունակող օդը ներշնչելիս ոչ ավելի, քան 0,25 մգ/մ² կոնցենտրացիայում, վերջինս պահպանվում է և կուտակվում թոքերում: Ավելի բարձր կոնցենտրացիաների դեպքում սնդիկը ներծծվում է նաև չվնասված մաշկի մեջ: Կախված սնդիկի քանակից և մարդու մարմնում դրա ընդունման տևողությունից, հնարավոր են

սուր և քրոնիկ թունավորումներ, ինչպես նաև միկրոմերկուրիզմ: Կանայք և երեխաներն ավելի զգայուն են սնդիկից թունավորումների նկատմամբ:

Սնդիկի երկարատև ազդեցության դեպքում մեծանում է կենտրոնական նյարդային համակարգի, լյարդի, երիկամների, թոքերի, աղեստամոքսային տրակտի, տեսողական ապարատի և իմունային համակարգի գործառույթների խանգարումների ռիսկը: Սնդիկի երկարատև ազդեցության և օրգանիզմում մեծ քանակությամբ սնդիկի կուտակման դեպքում կարող են առաջանալ այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են մոտորիկայի խանգարումը, վերջույթների թուլությունը, լսողության և տեսողության խանգարումը, կաթվածը: Համեմատության համար նշենք, որ սովորական ջերմաչափը պարունակում է մոտ 1-ից 2,6 գ սնդիկ, իսկ մեկ լյումինեսցենտային լամպը՝ 1-ից 5 մգ սնդիկ: Մեր շուկայում առկա չինական արտադրության լյումինեսցենտային լամպերում պարունակվում է 3-ից 5 մգ սնդիկ: Լյումինեսցենտային ոչ բոլոր լամպերն են պարունակում սնդիկի գոլորշիներ: Որոշ լամպերի ներքին մակերեսները պատված են կալցիումի ամալգամով (կալցիումի խառնուրդը սնդիկի հետ): Սնդիկն այս տեսքով անվտանգ է, քանի որ այն քիմիապես կապված է: Սնդիկ պարունակող լամպերի վնասման դեպքում պետք է համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործմամբ հավազել ջարդված կտորները պոլիէթիլային պարկի մեջ և տեղադրել անջրաթափանց փայտե արկղում: Վերը նշված աշխատանքները կատարելուց հետո, կալիումի պերմանգանատի 0,2%-ոց լուծույթով ախտահանել հատակը և կոշտ մակերեսները:

«Սնդիկի վերաբերյալ» գործում է միջազգային Մինամատայի կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2017թ-ին հոկտեմբերի 6-ին ՀՕ-130-Ն որոշմամբ:

Սնդիկ պարունակող թափոնների համար կիրառվում են «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի համապատասխան սահմանումները:

Սնդիկային թափոնները կառավարվում են էկոլոգիապես անվտանգ եղանակով՝ հաշվի առնելով Բազելի կոնվենցիայի դեկլար սկզբունքները և «Թափոնների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Հայաստանի Հանրապետության տարածքում չկա սնդիկային լամպերի վնասագերծման աշխատանքներ իրականացնող լիցենզավորված ընկերություն:

A պահեստային տարածքների կահավորման և կառավարման համար պահանջվող սանիտարական նորմաների ապահովման համար առաջարկվում է ուղղորդվել ՀՀ-ում գործող սանիտարական նորմաների պահանջների և միջազգային լավագույն փորձի հիման վրա՝ իրականացնելով հետևյալ պահանջները.

Փաթեթավորման համար հիմնական պահանջներ

- Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտանը պետք է տեղադրել ամուր կափարիչով տարայի մեջ
- Տարայի մեջ տեղադրել ծղոտից կամ արտորբենտ այլ նյութից պատրաստված ներքնակ լամպերի շուրջ, որպեսզի այն պաշտպանենք կոտրվելուց և ցնցումներից
- Պիտակավորել հայերեն և անգլերեն «ՄՆԴԻԿ - "Mercury - DO NOT OPEN." և փակցնել զգուշացնող



Չ՝բացել» նշան

Պահեստային տարածքի համար հիմնական պահանջներ

- Պահեստային տարածքը պետք է առանձնացված լինի այլ պահեստներից
- Ունենա ջրահեռացման դրենաժային համակարգ
- Մեկուսացված հատակ
- Ծածկ ամբողջ պահեստի տարածքով
- Ցանկապատ
- Պետք է ապահովված լինի օդափոխության համակարգով ըստ սանիտարահիգիենիկ նորմատիվային պահանջների
- Ապահովված լինի լուսավորությամբ

- Պահեստը պետք է ունենա համապատասխան նշագրումներ
- Պահեստում ունենալ թափված սնդիկի հավաքման միջոցներ
- Անհատական պաշտպանության միջոցների հավաքածու

Տեղեկացված անձնակազմ

- Պատասխանատու անձ համապատասխան գիտելիքներով
- Սնդիկ պարունակող նյութերի հետ աշխատանքի անվտանգ ապահովման հրահանգ

3.3 B պահեստ

B պահեստը նախատեսվում է տեղադրել լցակայանների տեղադրման տեղամասում, (տես հավելված 2) կոորդինատներ՝

N41°04'28°; E44°50'14°

ARM WGS-84 համակարգով՝

X 84 86400; Y45 48900; h1150

զբաղեցնելու է 2500մ² մակերես: Այն իրենից կներկայացնի բացօթյա տարածք՝ 50.0մ լայնությամբ, 50.0մ երկարությամբ (տես՝ նկար 6): Ամբողջ տարածքը ունենալու է ցանկապատ 2.0մ բարձրության, մետաղական ցանցավանդակով: Պահեստավորման համար նախատեսված տարածքի հատակը իզոլացվելու են բետոնով կամ պոչամբարների իզոլացման համար նախատեսված հիդրոիզալացիոն պոլիմերային շերտով: Այս պահեստային տարածքի (տես նկար 7) տարողունակությունը կազմելու է 5000մ³: Նախատեսվում է պահեստավորել կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդների թափոններ, որոնք հանդիսանում են 4-րդ դասի վտանգավորության թափոններ /համաձայն ըստ վտանգավորության դասակարգման թափոնների ցանկի/: Պահեստի ժամկետը պլանավորված է մոտ 5 տարիների համար: Որպես շիանարարական աղբ, շին աշխատանքների իրականացման ընթացքում տարածքից կանգնակների հիմքի փորման համար կհեռացվի մոտ 100,0մ³ ծավալով գրունտ՝ առանց


բուսահողի շերտի, որը տեղակայվելու է ընկերության դատարկ ապարների համար հատկացված լցակույտային տարածքում: Պահեստային տարածքից մթնոլորտային տեղումները (միջինում 600-800մմ տարեկան տեղումներ) կհեռացվեն, ամբողջ պարագծով նախատեսվող դրենաժային համակարգի միջոցով, որում կուտակված ջուրը մեխանիկական մաքրումից հետո կմղվի ընկերության շրջանառու տեխնիկական ջրի համակարգ՝ կրկնակի օգտագործման համար:



Նկար 6: Թեղուտ ՓԲԸ-ի տարածքում B տիպի ԱԹՏՏ-ի համար նախատեսված պահեստային տարածքի տեղը

Նոր ճանապարհի չի պլանավորվում թափոնների տեղափոխման համար, քանի որ այս տարածքում արդեն առկա է լցակույտերի տեղափոխման համար նախատեսված գրունտային ճանապարհ, որտեղ փոշենստեցման նպատակով, չոր եղանակների ժամանակ պարբերաբար խոնավեցվում է:

Նկար 7; Թեղուտ ՓԲԸ-ի տարածքում B նախատեսված պահեստի էսքիզը



B պահեստային տարածքի կահավորումն և կառավարումն կիրականացվի ՀՀ-ում պահանջվող և գործող սանիտարական նորմաների պահանջների և միջազգային լավագույն փորձի հիման վրա: Այս պահեստում «Կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդներից կազմված» թափոնների պահեստավորումը պետք է իրականացնել հաշվի առնելով հետևյալ պահանջները.

Փաթեթավորման համար հիմնական պահանջներ

Չի պահանջվում

Պահեստային տարածքի համար հիմնական պահանջներ

- Պահեստային տարածքը պետք է առանձնացված լինի այլ պահեստներից
- Ունենա ջրահեռացման դրենաժային համակարգ
- Մեկուսացված հատակ

- Ցանկապատ
- Ապահովված լինի լուսավորությամբ
- Պահեստը պետք է ունենա համապատասխան նշագրումներ
- Անհատական պաշտպանության միջոցների հավաքածու
- Հրդեհամարման առաջնային միջոցներ

Ներքին ավտոճանապարհներ

Նախատեսվող պինդ թափոնների տեղադրման տեղամասերի շահագործման նպատակով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Կօգտագործվեն ընկերության տարածքում առկա ներքին ավտոճանապարհները, որոնք համապատասխանում են տրանսպորտային միջոցների անվտանգ և հարմարավետ տեղաշարժի պահանջներին:

Պարագծային ցանկապատ

Թափոնների պահեստավորման համար նախատեսվող տարածքներում կտեղադրվի 2.0մ բարձրությամբ ցանկապատ, իսկ անկյունադարձման անհրաժեշտ տեղերում՝ պողպատյա հիմնական հենասյուներ: Ցանկապատի կայունություն ապահովելու համար պողպատյա հենասյուները պատշաճ կարգով ամրացված կլինեն գրունտին, բացի այդ հաշվի կառնվի տրանսպորտային միջոցների և սպասարկող անձնակազմի պահեստի տարածքի մուտքային մոտեցման հարցերը /պահեստային տարածքի էսկիզը նկար 7-ում/:

Կարծրացած տարասեռ պլաստմասե խառնուրդներից կազմված թափոնները հետագայում ենթակա են վերամշակման: Ընկերությունը, պահեստավորմանը զուգահեռ, աշխատելու է այս թափոնների վնասազերծման և վերամշակման միջոցառումների իրականացման ուղղությամբ: Նախնական քննարկումներ իրականացվել են հասարակական լուսնների ննթացքում և չի բացառվում հետագայում, ազդակիր համայնքում այս թափոնի վերամշակման գործընթացներին աջակցության տրամադրում՝ վերամշակման արտադրամասի ստեղծման համար:

4. Շրջակա Միջավայրի վրա ազդեցության հիմնական ռիսկեր

Նախատեսվող գործունեության թափոնների երկարատև պահման նպատակով արտադրական թափոնների առանձին պահեստային տարածքների շինարարության և շահագործման ժամանակ, հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա: Գործունեության արդյունքում հնարավոր բացասական ազդեցությանների դրսևորումները դիտարկում է որպես ռիսկեր, որոնք սակայն կլինեն կառավարելի, կունենան ժամանակավոր բնույթ՝ հիմնականում շինարարական աշխատանքների իրականացման փուլում:

Թեղուտ ՓԲԸ-ի ԱԹՏՏ-երի կառուցման և շահագործման ժամանակ հնարավոր հավանական ռիսկերն են՝

- Ընկերության կողմից շահագործվող տարածքում թափոնների փոխադրման աշխատանքների իրականացման ժամանակ /ներգրավված է լինելու մեկ ինքնաթափ մեքենա/ ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող փոշու և վառելանյութի այրման գազերի արտանետումների հնարավոր բացասական ազդեցությունները,
- ԱԹՏ տեղամասերի շինաշխատանքների դեպքում՝ ոչ մեծ ծավալներով, փոշու մթնոլորտային արտանետումների տեսքով,
- Ջրօգտագործման և ջրահեռացման ծավալների փոփոխություններ չեն նախատեսվում,
- Թափոնների տեղադրման տեղամասի նախատեսվող տարածքները հանդիսանում են ընկերության սեփականությունը, նոր տարածքների ներգրավում բացառվում է, հետևաբար նախատեսվող գործունեությունը չունի վերաբնակեցման խնդիրներ և չի կարող ազդել տեղանքի կենսաբազմազանության վրա,
- Նոր ճանապարհներ կառուցում չի նախատեսվում,
- Տեղամասի կառուցման ժամանակ կառաջանան փոքր քանակությամբ շինարարական թափոններ, որոնք կտեղափոխվեն համապատասխան աղբավայր՝ շինարարություն իրականացնող ընկերության կողմից,

- Թափոնների տեղադրման տեղամասերի շահագործման արդյունքում բացակայում են աղմուկի, թրթռումների և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուրները: Հետևաբար, կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում շրջակա միջավայրի վրա վերը նշված ֆիզիկական գործոնների հնարավոր ազդեցությամբ,
- Հարակից բնակելի համայնքների վրա ազդեցությունը զրոյացված է, քանի որ նախատեսվող գործունեությունը գտնվում է բավականին հեռու մոտակա բնակավայրերից /ամենամոտ բնակավայրից՝ Շնող գյուղից, 3.0կմ հեռավորության վրա/,
- Դրական սոցիալական ազդեցություն կունենանոր ծառայության ստեղծման և հնարավոր աշխատատեղերի բացման հեռանկարը,
- Տարածքում չեն հայտնաբերվել պատմական կամ մշակութային արժեքներ և ազդեցություն չի սպասվում, իսկ աշխատանքների իրականացման արդյունքում նոր հայտնաբերումների ի հայտ գալու դեպքում ընկերությունը կգործի ըստ ՀՀ օրենդրության պահանջների/գործընթացը շարունակելով միայն համապատասխան լիազոր մարմնի կողմից համաձայնություն ստանալուց հետո/,
- Տարածքի համար առկա է հրդեհային ռիսկեր, որոնց մեղման և կանխարգելման նպատակով կներդրվեն համապատասխան հակահրդեհային միջոցառումներ:

Շահագործման փուլում, Թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների ներդրման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններ չի ակնկալվում:

5. Այլընտրանքային տարբերակների վերլուծություն

ԱԹՏՏ ստեղծմանը այլընտրանք դիտարկվում է երկու օպցիա:

Առկա տարբերակ

Առկա տարբերակը վերաբերում է այն իրավիճակին, երբ Թեղուտ ՓԲԸ-ում չի կառուցում ԱԹՏՏ, որը կբերի

- ՇՄ-ի վրա անկառավարելի ազդեցության, հաշվի առնելով արդյունաբերական թափոնների տեղադրման մասնագիտացված պոլիգոնների բացակայության և թափոնների վերամշակմամբ և վնասազերծմամբ զբաղվող լիցենզավորված մասնագիտացված կազմակերպությունների սակավությանը
- անարդյունավետ ծախսերի ավելացում՝ հետագա տարիներին աճող ծավալների հաշվառումով

Առաջարկվող տարբերակ

ԱԹՏՏ-երի կառաուցման և ժամանակավոր պահման ռեժիմի ներդրման դեպքում կկարողանանք

- ապահովել ԱԹ-ների կառավարելի և թափանցիկ շրջանառություն
- ապահովել ԱԹ-ների համար համապատասխան պահման տեղամաս,
- ապահովել հուսալի ժամանակավոր պահեստային տարածքներ,
- ժամանակ ունենալ ներդնել նոր էկոլոգիապես մաքուր լուծումներ,
- ՇՄ հանդեպ պատասխանատու բիզնես քաղաքականության սկզբունքներին հավատարմություն
-

6. Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման միջոցառումներ

Թեղուտ ՓԲԸ-ի ԱԹՏՏ նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու, կանխելու կամ նվազագույնին հասցնելու համար նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

Շինարարության փուլ

Նախատեսվող գործունեությունը պետք է իրականացվի ընկերության տարածքում և բացառվում է նոր հողի ձեռքբերման անհրաժեշտությունը, վերաբնակեցումը կամ տնտեսական գործունեության տեղափոխում: Ե պահեստի տեղամասի կառուցման աշխատանքների ընթացքում ընտրվելու է լցակույտերից ազատված տարածք և բերրի հողի շերտ չի հանվելու /տես նկար 4/: Հողի և ջրի աղտոտումից կարելի է խուսափել մեքենաների վրացումը, լցավորումը և այլ ծառայությունների մատուցումը կազմակերպելով համապատասխան սպասարկման կենտրոններում կամ շինհրապարակի նախատեսված վայրերում, վերահսկելով նյութերի կորուստները: Շինարարության կապալառուն կիրականացնի աղբի հեռացումը կոմունալ ծառայություններ մատուցողների միջոցով: Ա Պահեստային տնտեսության համար նախատեսված կառույց առկա է, որպես ժամանակավոր պահեստ, ներկայումս գոյություն ունի որպես պահեստային կառուց (տես նկար 4), անհրաժեշտ է միայն վերակահավորել նախագծի պայմանների ապահովման նպատակով:

Աղմուկ, թրթռում կամ էլեկտրամագնիսական դաշտերի աղբյուրներ

Ելնելով նախատեսվող գործունեության իրականացման աշխատանքների փոքր ծավալից և ժամանակավոր բնույթից, ինչպես նաև հետագա շահագործման գործընթացից, շինարարության ժամանակ աղմուկի և թրթռացման առաջացումը չի կարող դիտարկվել որպես ռիսկ, քանի որ հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կկրի ժամանակավոր բնույթ, կլինի տեղային, աննշան տվյալ տարածքի համար:

Շահագործման փուլ

Այս փուլում հավանական բոլոր ռիսկերը կկառավարվեն <<Թափոնների կառավարման>> պլանով նախատեսված միջոցառումների շրջանակում:

Մոնիտորինգ պլան

Ընկերությունում իրականացվում է ջրային ռեսուրսների և մթնոլորտային օդի որակի կանոնավոր ամսեկան մոնիթորինգ: Մոնիտորինգի պլանում կներառվեն նաև

A և B պահեստային տնտեսություններին հարող տարածքների, տարեկան առնվազը մեկ անգամ: Մոնիտորինգը թույլ կտա արագ արձանագրել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտումները կանխելու համար: Մոնիտորինգ կիրականացվի անկախ հավաստագրված լաբորատորիայի ներգրավմամբ: Տես **Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիրը**

Սոցիալական ազդեցություն

Կբացվի լրացուցիչ աշխատատեղ, տարածաշրջանի բնակչության համար կլինի լրացուցիչ եկամուտի աղբյուր, որը և կունենա դրական սոցիալական ազդեցություն: ՇՄԱԳ հայտի նախնական փուլի հասարակական լսումների ընթացքում, ազդակիր համայնքի ներկայացուցիչների կողմից հետաքրքրություն արտահայտվեց այս թափոնի վերամշակման գործընթացներին սեփական արտադրության կազմակերպման մասին: Ընկերությունը պատրաստ է աջակցություն տրամադրել վերամշակման ազդակիր համայնքում արտադրամասի ստեղծման համար:

Բողոքների կառավարում

Ազդակիր համայնքի բնակիչները կարող են ունենալ բողոքներ, որոնց համար Թեղուտ ՓԲԸ-ն ունի ներդրած բողոքների ներկայացման և կառավարման մեխանիզմ:

Արտակարգ իրավիճակների արձագանքման և Հակահրդեհային միջոցառումներ

Պահեստային (a և b) տարածքները ներառվելու են ընկերության հակահրդեհային միջոցառումների պլանում, ներդրվելու է հրդեհամարման առաջնային միջոցներ, ըստ նորմատիվային պահանջների, իրականացվելու է ուսուցողական վարժանքներ, ընկերության Վթարների վերացման պլանի շրջանակներում և ՀՀ օրենդրության պահանջների ապահովմամբ:

1. Տեղամասերը ապահովված են վթարային ելքերով, պատերին փակցված պետք է լինեն տեղահանման քարտեզ-սխեմաներ:

2. Պահեստներում և արտհրապարակում նախատեսված են ներքին և արտաքին հրաշիջման համակարգեր, նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտներ:
3. Բոլոր շինությունները պետք է ունենան հողանցում և շանթապաշտպանություն:
4. Պահեստներում պետք է լինեն կրակմարիչներ, ավազով արկղ, բահ և այլն:
5. Կայունի պերմանգանատի 0.2 տոկոսանոց լուծույթով 10լ տարրա A պահեստում լամպերի վնասման դեպքում սնդիկի համար: Չեզոքացնող լուծույթները պետք է դրված լինեն դարակաշարում, մատչելի բարձրությունում և ունենան հատուկ գունավորում:
6. Անձնակազմը պետք է ապահովված լինի հատուկ հագուստով, ռետինե երկարաճիտ կոշիկներով, պաշտպանիչ ակնոցներով, ռեսպիրատորներով, ռեզինե ձեռնոցներով և միանվագ օգտագործման արտահագուստով: Ինչպես նաև հակազգա՝ հատուկ սնդիկի համար նախատեսված գտող սուփով:

Ձեռնարկությունը ունի Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարարա ծառայության հետ համատեղ վթարների վերացման պլան և պարբերաբար անցկացվում են վարժանքներ:

Շրջակա միջավայրին հասցվող վնասի հաշվարկ

ԱԹՏՏ շահագործումը ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է գործելու շրջակա միջավայրի վրա, որը որոշվում է միջավայրին հասցված տնտեսական վնասով: Տնտեսական վնասը, դա շրջակա միջավայրի աղտոտվածության հետևանքով առաջացած ծախսերն ու կորուստներն են՝ արժեքային արտահայտությամբ:

Տարբերվում են 2 տեսակի ծախսեր, որոնք առաջանում են շրջակա միջավայրի աղտոտումից: Առաջին տեսակի ծախսերը առաջանում են այն դեպքում, երբ գործունեությունը հանդիսանում է շրջակա միջավայրի տաքեր ոլորտների (օդ, ջուր, հող և այլն) աղտոտման աղբյուր, որոնք օգտագործվում են այլ տնտեսական օբյեկտների կողմից և որոնց նորմալ գործունեության համար կպահանջվի կատարել հնարավոր տեխնիկական միջոցառումներ՝ այդ ազդեցությունը մասնակի կամ լրիվ կանխելու

նպատակով: Երկրորդ տեսակի ծախսերը առաջանում են աղտոտված շրջակա միջավայրի ազդեցությունից՝ ցիպիենտների վրա:

Տնտեսական վնասը շրջակա միջավայրի աղտոտումից համարվում է կոմպլեքս մեծություն և որոշվում է որպես վնասների գումար, որոնք հասցվում են ռեցիպիենտների առանձին տեսակներին աղտոտող գոտու սահմաններում: Հիմնական ռեցիպիենտներ են համարվում բնությունը, գյուղատնտեսական հանդակները, անտառային ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը և այլն:

ԱԹՏՏ շահագործման արդյունքում, ՇՄ-ի տնտեսական վնասը համարվում է կոմպլեքս մեծություն և որոշվում է որպես վնասների գումար, որոնք հասցվում են ռեցիպիենտների առանձին տեսակներին աղտոտող գոտու սահմաններում:

$$V = V_{\sigma} + V_{\rho} + V_z + V_{z0}$$

որտեղ՝

V_{σ} - վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումներից հասցված տարեկան գումարային վնասն է, քանի որ մթնոլորտային արտանետումներ չեն լինելու, $V_{\sigma}=0$

V_{ρ} - ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերից հասցված տարեկան գումարային վնասն է, Հաշվի առնելով, որ տողամասից ջրային ռեսուրսներ արտահոսքը բացակայում է, $V_{\rho}=0$,

V_z - հողերի դեգրադացիայից, աղտոտումից և աղտոտումից հասցված տարեկան վնասն է: Բացասական փոփոխություն է համարվում արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտում, աղբոտումը: $V_z=0$

V_{z0} - հողերի օտարումից հասցված տարեկան վնասն է՝ արտադրամասի համար վարձակալվում է արդյունաբերական յուրացված տարածք՝ $V_{z0}=0$:

Համաձայն ՀՀ Կառավարության 25 հունվարի 2005 թվականի N 92 որոշման հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին, հողերի դեգրադացիայից, աղտոտումից և աղտոտումից հասցված տարեկան վնասը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \sigma_{\alpha} + U_{\alpha} + \sigma_{\text{ու}} ,$$

որտեղ՝

U -ն ազդեցությունն է,

σ_{α} -ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են,

ԱԿ-ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է,
ԾՌԿ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են:

Ազդեցության գնահատումը ներառում է վնասակար ներգործության արդյունքում հողային ռեսուրսների նվազման հետևանքով արտադրանքի քանակական և որակական կորուստների փոխհատուցման, վնասակար ներգործության արդյունքում հողային ռեսուրսների վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների, ինչպես նաև աղտոտման ազդեցության հետևանքով գյուղատնտեսական և այլ արտադրանքի կորստի փոխհատուցման ծախսերը: ԱԹՏՏ համար հողային ռեսուրսների վրա ուղղակի ազդեցություն տեղի չի ունենում: Տեղադրման տեղամար գտնվում է ընկերության տարածքում, խախտված հողերի վրա և հողային ռեսուրսների նվազում չի նախատեսվում՝ ուստի ուղակի տնտեսականա վնասը գնահատվում է զրո:

Ընկերությունը հանդիսանում է բնապահպանական հարկ վճարող համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի 162-րդ հոդվածի 4 կետի 2 և 3 ենթակետերի և իրականացնում է արտադրական թափոնների առաջացման և տեղադրման համար հարկային վճարումներ համաձայն ՀՀ օրենդրության:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր

Ռիսկի անվանում	Ռիսկի նկարագրություն	Միջոցառում	Պատասխանատու
Գրունտային ջրերի աղտոտում	Պահեստավորված թափոնների լվացման դեպքում գրունտային ջրերի աղտոտում	Ներդնել մշտադիտարկման պլան, ներգրավել մասնագիտացված լաբորատորիա, պարբերական եռամսյակային մշտադիտարկման համար	Ընկերության բնապահպանության բաժին
Մթնոլորտային արտանետումներ	Պահեստավորված թափոններից մթնոլորտի աղտոտում	Ներդնել մշտադիտարկման պլան, ներգրավել մասնագիտացված լաբորատորիա, պարբերական եռամսյակային մշտադիտարկման համար	Ընկերության բնապահպանության բաժին
Թափոնների կուտակման ծավալների վերահսկողություն	Պահեստային տարածքները նախատեսվելու են մոտակա 5 տարների համար	Ընկերությունը պետք է իրականացնի թափոնների ծավալների հաշվառում և մատյանի վարում ըստ կցված ձևի:	Ընկերության բնապահպանության բաժին
Թափոնների կազմում առկա տոքսիկ նյութերի ազդեցություն	Հատկապես սնդիկային լամպերի դեպքում, կարող է առաջանալ ծանր մետաղի՝ սնդիկի և սնդիկային աղերի ազդեցություն	Ներդնել թափոնների հետ անվտանգ աշխատանքների իրականացման հրահանգներ, պահեստային տարածքներում տեղադրել զգուշացնող նշաններ, կազմել վտանգավոր նյութերի հակիրճ նկարագրության թերթիկներ	Ընկերության տեխնիկական անվտանգության և աշխատանքի պաշտպանության բաժին
Փաթեթավորման տարաներ	Փաթեթավորման տարաները կարող են պարունակել մնացորդային քիմիական նյութեր	Փաթեթավորման տարաներ, հատկապես ակտիվ քիմիական նյութերի պարունակությամբ ենթակա են լվացման, նախքան տեղադրման տեղամաս տեղափոխելը	Ընկերության արտադրության ղեկավարման բաժին
Թափոնների հետ աշխատող անձնակազմի անվտանգության և առողջության պաշտպանություն	Թափոնների հետ աշխատող անձնակազմը ենթակա է վնասակար ազդեցության անզգուշության կամ չկանոնակարգված աշխատանքի արդյունքում	Իրականացնել գիտելիքների բարելավման պարբերական աշխատանքներ, առանձնացնել ԱԹՏՏ-ի համար մասնագիտացված անձնակազմ, ապահովել ԱՊՄ-ով	Ընկերության տեխնիկական անվտանգության և աշխատանքի պաշտպանության բաժին
Հրդեհի բռնկման հավանականություն	Պահեստային տարածքներում, հատկապես Ե տիպի ԱԹՏՏ-ի, առկա է հրդեհի բռնկման ռիսկ	ԱԹՏՏ-երը կահավորել հրդեհամարման առաջնային միջոցներով, Ե տիպի պահեստի շուրջ ունենալ հրդեհամարման նպատակներով ավազի կույտեր	Ընկերության տեխնիկական անվտանգության և աշխատանքի պաշտպանության բաժին

Թափոնների հաշվառման թերթիկ

----- 2020թ.


Թափոնի անվանումը և ծածկագիրը	թվական	թափոն գոյացնող պրոցեսի անվանումը	թափոնի գոյացման նորմատիվը	գոյացած թափոնի քանակը	թափոնի օգտագործված քանակությունը	թափոնակուտակիչ տեղափոխված քանակը	թափոնի, երկարատև պահում ("ԵՊ") քանակը	թափոնի առկա քանակը
1	2	3	4	5	6	7	9	10

Պատասխանատու _____


7. Գրականություն

- International Finance Corporation (IFC) 2007: Environmental, Health and Safety (EHS) Guidelines. Available at: <http://www.ifc.org/ehsguidelines>
- World Bank Group: Operational Directive 4.01: Environmental Assessment.
- Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
- ՀՀ մակերևութային ջրերի որակը 2019 թվականի
- "Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.)
- Թափոնների վտանգավորության դասակարգման ցանկ
- European Commission Detailed assessment of Waste Management Plans - second batch
Reference: ENV.C.2/FRA/2013/0023
- ՀՀՇՆ 40.01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում»,
հաստատված է 17.03.2014թ.
- СНиП 2.04.02.84. Водоснабжение. Наружные сети и сооружения. - М., 1985г.՝
2020թ. ուղղումներով
- Водное хозяйство. Справочник/ ред.И.И.Бородавченко.Т.5.-М.:ВО
“Агропромиздат”, 1988, 399 с.
- The Department of Environmental Affairs and Development Planning in Partnership
with Danida and WSP Environmental (Pty) Ltd The Industry Waste Management Plan
Guideline
- IFC, Environmental, Health, and Safety (EHS) Guidelines GENERAL EHS GUIDELINES:
ENVIRONMENTAL WASTE MANAGEMENT
- Մինամատայի Կոնվենցիա
- IFC, Environmental, Health, and Safety Guidelines for Waste Management Facilities:

Հավելված 1



Հավելված 2



Հավելված 3

